

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՀՈԳԵՐԱՆԳԻՍ

ԱՊՐԻԼԵԱՆ ԵՂԵՌՆԻ ՎԱԹՍՈՒՆԱՄԵԱԿԻՆ ԱՐԻԹՐՈՎ

Ինչպէս Սփիւռքի բոլոր գաղութներուն, Երուսաղէմի մէջ ևս Ապրիլ-Էան Եղեռնի վաթսունամեակի նշումը Հանդիսացաւ յուղումի օր մը, Երբ Խորայէլի հայ գաղութը անխտիր իր յարդանքը յայտնեց Առաջին Մեծ Պատերազմի ընթացքին զոհուած աւելի քան մէկ միլիոն հայերու յիշատակին:

Հինգշաբթի, 24 Ապրիլ 1975, Երուսաղէմի և այլ քաղաքներու հայկական խանութիւնները փակ էին ի յարդանս Ապրիլ-Էան Եղեռնին, և գրեթէ ամէն Հայորդի, ո՞ր յարանուանութեան ալ պատկանէր, առառութիւնք լեցուցած էր Ս. Յակովեանց Տաճարը, գաւիթն ու չքջակայ անցքերը, ներկայ ըլլալու յիշատակի Սուրբ Պատարացին, զոր մատոյց Գերձ. Տ. Շահէ Արքակու. Անէմնեան Ամենապատիր Պատրիարք Ս. Հայրը ներկայ էր պատարազի ամբողջ ընթացքին, ինչպէս նաև Երուսաղէմի կրօնական համայնքներու ներկայացուցիչները և այլ անձնաւորութիւններ:

Հայ միութիւններու պատկանող Հարիւրաւոր արիներ և արենոյշներ կը հոկէին ընդհանուր կարգապահութեան, մինչ զաւիթը, Երուսաղէմի Հայկական հինգ կազմակերպութիւններէն նշանակուած մարմին մը Ապրիլ-Էան Եղեռնի վաթսունամեակը յիշատակող կրծքանշներ կը բաժնէր ներկաներուն:

Հանդիսաւոր Ս. Պատարացի բնթացքին քարոզեց պատարացի Սրբազնութ նախ անդիքն և ապա հայերէն լեզուներով, և հբաւիրեց ներկաները միանայ և տէր կազնիլ այն բոլորին՝ ինչ որ սուրբ էր և անկապտելի զանձ մեր նահատակներուն համար — Հայաստանեաց Ս. Եկեղեցին, մեր զարաւոր մը-շակոյթը, աւանդութիւններն ու բարքերը, մեր լեզուն և դպրոցը:

Կատարուած Հանդիսաւոր Հոգէ Հանդիսաէն ետք, Միարանութիւն ու ժողովուրդ, նախագահութեամբ Ամեն. Պատրիարք Ս. Զօր և սուածնորդութեամբ Հայ արի-արենոյշներուն, թափօրական զնացքով և Հանդստեան չարականներու երգեցողութեամբ ուղղուեցան զէպի Սիոն լեռան վրայ գտնուող Ս. Փրկիչ ազգային գերեզմանասունը, ուր խմբուեցան Աքարայի հերոսներու յուշարձանին առջե և ուր զետեղուեցան մեծ թիւով փառաւոր ծաղկեպսակներ:

Ապա, Երուսաղէմի հայ միութիւններուն կողմէ խօսք առաւ Պրէ. Յան կոր Տէմիրձնեան, որ վերլուծեց Հայուն նկարագիրը, կոչ ըրաւ հաւատարիմ մը-նալ մեր ցեղային առաքինութիւններուն և աշխատիր հայ ժողովուրդի բարօրութեան համար :

Երեկոյեան ժամը 8ին, Հ. Ե. Միութեան սրահին մէջ տեղի ունեցաւ Հայկական միութիւններուն կողմէ կազմակերպուած յուշահանդէս մը, որուն նախագահէց Ամեն. Պատրիարք Ս. Հայրը, և որուն ներկայ եղաւ խուռն բազմութիւն մը: